

Կոլոտի աշակերտներն ալ ունեցած են, անշուշտ, թարգմանած կամ ինքնագիր երկեր՝ որոնցմէ Նալեանի գործերը ծանօթ են աւելի:

Ասոնք ալ քալեցին այն ուղեգծին վրայ, զոր գծեց Կոլոտ Ամրտուէն մինչեւ Պոլիս: Կոլոտ իր հայրական խրատներն ու յորդորները, զոր անշուշտ խանդաղատանքով կու տար իր սիրելի զաւակներուն, հաստատած է իր Յիշատակարաններուն մէջ, որպէս զիմշակեն ուսումները, լուպահեն գրքերը, ծուլութեան վարչամակին մէջ փաթթելով շխաղեն հողին տակ՝ քանքարաթագոյց ծառային պէս: Կոլոտ պատրաստած էր այս խումբը, «զի մի յառաջին խղճութիւն անկցի Ազգս մեր»:

ԿՈԼՈՏԻՆ ՄԱՆՐ

Բարդ աշխատութիւններն ու յոգնութիւնները շուտ կ'ընկճեն ամէնէն զօրաւոր կաղմուածքներն ալ, որչափ ալ զգոյշ եւ ուշագիր ըլլան այնպիսի աշխատողներ իրենց առողջութեան պայմաններուն: Տեսանք թէ Կոլոտ անընդհատ աշխատանք պահանջող պաշտօնական գործերու հիւսուածքէն վարմուած էր բոլորովին: Հոգեխօսական եւ բնախօսական յոգնութիւններ ալ շատ ունեցաւ: Ու այս յոգնութիւնները կրնան զգալ անոնք, որ առաւել կամ նուազ նոյն կերպով յոգնեցուցած են իրենց միտքն ու սիրտը:

Կոլոտ այն յոգնութիւններուն մէջ 63 ձմեռ տեսած էր¹, երբ գործէ քաշուեցաւ կիսով չափ, պատրիարքութիւնը իր իսկ ձեռքով յանձնելով Նալեանին, իր ամէնէն կարող ձեռնասուռին: Ինքն իրեն պահեց վերին հակողութիւնը եւ պատրիարքական տիտղոսը:

Այս քաշուած վիճակին մէջ ամէնէն սիրելի զբաղումը դասախօսութիւն էր: Անշուշտ իր

¹ Հմմտ. «Գաղթական Ծանոց» Ա. Մաս. էջ 421: